AMERICAN EXPRESS®
GOLD քարտ

AMERICAN EXPRESS

Մի վայելիր կյանքի առանց երա™

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ողջույնի խոսք 2

Ճանապարհորդական ապահովագրություն 4

MEMBERSHIP REWARDS պարգևատրումների ծրագիր 6

PRIORITY PASS® ծառայություն 7

Օժանդակություն ճանապարհին 8

Ծուրջօրյա սպասարկում 9

Ապահովագրություն զեղծարարությունից 10

Գնումների ապահովագրություն 11

American Express® Gold Քարտի տրամադրման, սպասարկման և ծառայություններից օգտվելու պայմաններ 12

Ուժի մեջ է՝ 01.10.2023թ.-ից
eFO 72-16-33/8#6

Հարգելի՛ American Express® Gold Քարտատեր

Բարի գալուստ American Express® Gold Քարտի արտոնությունների և բացառիկ հնարավորությունների աշխարհ: Վստահ ենք, որ այսուհետ American Express® Gold Քարտը կդառնա Ձեր դրամապանակի ամենից հաճախ օգտագործվող վճարային գործիքը:

- Membership Rewards պարգևատրումների ծրագիր,
- ճանապարհորդական ապահովագրության լայն փաթեթ,
- ապահովագրություն զեղծարարությունից,
- գնումների ապահովագրություն,
- օժանդակություն ճանապարհին,
- վարկային գծի անտոկոս ժամանակահատված,
- պարբերաբար ներկայացվող հատուկ առաջարկներ:

Վայելե՛ք բոլոր այս հնարավորություններն ամենուր և ամեն օր:

Հարգանքով՝
Ակբա բանկի գլխավոր
գործադիր տնօրեն՝

Հակոբ Անդրեասյան

Մի վայելիր կյանքն առանց նրա™

Գնացե՛ք հանգստանալու առանց անհանգստանալու...

Ճանապարհորդական ապահովագրություն

American Express® Gold Քարտի հետ տրամադրվում է ապահովագրական ծառայությունների լայն փաթեթ, որն իր մեջ ներառում է միաժամանակ մի քանի տեսակի ապահովագրական ծածկույթներ. ուղեբեռի ուշացում կամ կորուստ, թռիչքի բացթողում կամ հետաձգում: Դուք և Ձեզ հետ ճանապարհորդող Ձեր ընտանիքի անդամները (կին/ամուսին, երեխաներ) պատահարի առաջացման դեպքում ապահովագրված եք նման իրավիճակներից և կստանաք սահմանված փոխհատուցում:

Պատահարի առաջացման դեպքում արտասահմանում գտնվելիս American Express® Gold Քարտը պատրաստ է լինել Ձեր կողքին նույնիսկ այն դեպքերում, երբ կպահանջվի շտապ բժշկական օգնու-

թյուն կամ որևէ միջադեպի արդյունքում անհրաժեշտ կլինի կատարել բժշկական ծախսեր, ընդ որում այդ ծախսերն ապահովագրված են մինչև 50 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով:

Ձեզ կտրամադրվի նաև ապահովագրական հավաստագիր (Certificate of Insurance), որը կարող եք ներկայացնել դեսպանատներում մուտքի արտոնագրերի համար դիմելիս:

Ձեր ըմպած շամպայնը կհասցնի Ձեզ շամպայնի հայրենիք...

MEMBERSHIP REWARDS® պարգևատրումների ծրագիր

Membership Rewards պարգևատրումների ծրագիրն American Express® ապրանքանիշի բացառիկ առավելություններից է, որը ճանաչելի է ամբողջ աշխարհում: Քարտով կատարած վճարային և կանխիկացման գործարքների դիմաց տրամադրվում են Membership Rewards միավորներ, որոնք հետագայում փոխարինվում են արժեքավոր նվերներով:

Ձեր միավորներին համարժեք պարգևատրումները մշտապես թարմացվում են և հասանելի են **www.americanexpress.am** կայքում տեղակայված էլեկտրոնային կատալոգում:
Մատուցե՛ք հաճելի անակնկալ ինչպես Ձեզ, այնպես էլ Ձեր մտերիմներին:

Սպասելիքներն արդարացվում են...

PRIORITY PASS® ծառայություն

Priority Pass համակարգն ընդգրկում է ավելի քան 140 երկրների 600 քաղաքների 1300 օդանավակայանների VIP սպասասրահներ, որտեղ Ձեզ կընդունեն հատուկ հյուրի կարգավիճակում՝ որպես American Express® Քարտատեր: Դուք կարող եք վայելել Priority Pass սրահների հանգիստն ու հարմարավետությունը, անկախ նրանից, թե Ձեր ուղևորությունը գործնական է, թե անձնական և թե ինչ դասի ավիատոմս եք ձեռք բերել: Priority Pass քարտը կտրամադրվի Ձեզ անվճար և առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի, իսկ այցելությունների ընթացքում Ձեզ համար կգործեն հատուկ սակագներ:

Խնդրի լուծումն ավելի մոտ է, քան Ձեզ թվում է...

Օժանդակություն ճանապարհին

Հայաստանի ողջ տարածքում Դուք կարող եք տարեկան 2 անգամ անվճար օգտվել խափանված մարդատար ավտոմեքենայի տարհանման ծառայությունից, նույնիսկ եթե Դուք չեք մեքենայի սեփականատերը: Այս ծառայությունն իր տեսակի մեջ եզակի է Հայաստանում և որևէ այլ քարտատեսակի հետ չի տրամադրվում: Ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է պարզապես զանգահարել բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն՝ +374 10 31 99 99:



Պարզապես կյանքը հալած յուղի պես...

Շուրջօրյա սպասարկում

American Express® ապրանքանիշին հատուկ է սպասարկման առանձնակի որակը:

+374 10 31 99 99

Սա մեր շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոնի հեռախոսահամարն է, որը միշտ հասանելի է Ձեզ աշխարհի ցանկացած կետից:
Մեր փորձառու մասնագետներն ամեն պահի պատրաստ են տրամադրել տեղեկատվություն, օժանդակել American Express® Gold Քարտով տրամադրվող ծառայություններից օգտվելիս, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում պատրաստ են կազմակերպել Քարտի հրատապ փոխարինումը վերջինիս կորստի կամ վնասման դեպքում:

Ձեր անձրևանոցն ավելի մեծ է, քան Դուք կարծում եք...

Ապահովագրություն զեղծարարությունից

American Express® Gold Քարտն ունի անվտանգության բարձրագույն աստիճան, ինչպես նաև առանձին ապահովագրություն հնարավոր բոլոր առցանց և այլ տեսակի զեղծարարություններից:

Գնումների ապահովագրություն

American Express® Gold Քարտն ապահովագրում է Քարտով իրականացրած գնումները գնային տատանումներից, առաքման ընթացքում վնասվելուց կամ կորստից, կրկնապատկվում է քարտով կատարված գնման երաշխիքային ժամկետը, ինչպես նաև գնման պահից 120 օրերի ընթացքում ապահովագրում է վնասվելուց կամ գողությունից:

American Express® Gold Քարտի տրամադրման, սպասարկման և ծառայություններից օգտվելու պայմաններ

Membership Rewards պարգևատրումների ծրագրին անդամակցման և մասնակցության պայմանները

Ինչպե՞ս անդամակցել Membership Rewards պարգևատրումների ծրագրին

Membership Rewards պարգևատրումների ծրագրին անդամակցումը կարող է իրականացվել 2 եղանակով.

1. Քարտի պատվիրման պահին՝ Քարտի դիմումում համապատասխան նշում կատարելու միջոցով, ընդ որում՝ այս պարագայում ծրագրին անդամակցումն առաջին տարվա համար լինում է անվճար:

2. Քարտի ստացումից հետո ցանկացած պահի՝ այցելելով բանկի որևէ մասնաճյուղ և լրացնելով Membership Rewards ծրագրի անդամակցության դիմումը:

Ինչպե՞ս է տեղի ունենում միավորների կուտակումը

Դուք կատարում եք վճարային կամ կանխիկացման գործարք Ձեր American Express® Gold Քարտով:

Հայաստանում և արտերկրում կատարված յուրաքանչյուր գործարքից հետո հաշվարկվում են համապատասխան քանակությամբ միավորներ՝

1 միավոր = 500 ՀՀ դրամ (վճարային գործարքի դիմաց)
1 միավոր = 1 000 ՀՀ դրամ (կանխիկացման գործարքի դիմաց):



Ինչպե՞ս պատվիրել Ձեր պարգևատրումը

1. Ստուգեք Ձեր միավորների քանակը: Կուտակած միավորների մասին Դուք տեղեկացվում եք ամսական կտրվածքով Ձեզ ուղարկվող քարտային հաշվի քաղվածքի միջոցով: Բացի այդ, ընթացիկ միավորների քանակի մասին միշտ կարող եք տեղեկանալ՝ զանգահարելով բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն:
2. Օգտվելով Membership Rewards պարգևատրումների ծրագրի **www.americanexpress.am** կայքի էլեկտրոնային կատալոգից՝ ընտրեք Ձեր կուտակած միավորներին համարժեք նվերը, զանգահարեք բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն և պատվիրեք այն:
3. Ստանալով Ձեր պատվերը՝ Membership Rewards պարգևատրումների ծրագիրը սպասարկող անձնակազմը կարճ ժամանակահատվածում կկազմակերպի պարգևատրման հանձնումը բանկի կամ առևտրի և սպասարկման կետի կողմից: Այն դեպքում, երբ Ձեր ընտրած պարգևատրումը տվյալ պահին հասանելի չէ, Ձեզ կընձեռվի փոխարինող տարբերակներից ընտրություն կատարելու հնարավորություն:

Ինչպե՞ս արագացնել միավորների կուտակումը

1. Կատարե՛ք Ձեր առօրյա գնումները որքան հնարավոր է հաճախ կիրառելով American Express® Gold Քարտը որպես վճարման միջոց:

Ամենևին էլ նշանակություն չունի, թե որտեղ եք Դուք գտնվում՝ Հայաստանում, թե արտերկրում, քանի որ American Express® համակարգն ունի սպասարկման համաշխարհային լայն ցանց:

Հիշեք, որ American Express® Gold Քարտով կատարած յուրաքանչյուր գործարքով Ձեր միավորներն ավելանում են և Դուք ավելի եք մոտենում Ձեր ցանկալի պարգևատրմանը:

2. Պատվիրե՛ք կից քարտեր Ձեր հարազատների համար:

Ձեր American Express® Gold Քարտի քարտային հաշվին կցված առաջին երկու կից American Express® Gold Քարտերի տրամադրումն ու սպասարկումն անվճար են: Պատվիրելով կից քարտեր Ձեր

հարազատների համար՝ Դուք հնարավորություն եք ստանում կուտակել միավորներ ոչ միայն Ձեր Քարտով, այլ նաև կից American Express® Gold Քարտերով կատարված գործարքների դիմաց: Որքան շատ են գործարքները, այնքան արագ են կուտակվում միավորները: Կից Քարտի պատվիրման համար կարող եք լրացնել կից Քարտի առցանց դիմում **www.americanexpress.am** կայքում կամ այցելել բանկի ցանկացած մասնաճյուղ:

3. Հետևե՛ք բանկի կողմից իրականացվող հատուկ առաջարկներին:

Բանկի կողմից American Express® Gold Քարտատերերի համար պարբերաբար կազմակերպվում են հավելյալ միավորների կուտակմանն ուղղված հատուկ առաջարկներ: Ծանոթացեք դրանց **www.americanexpress.am** կայքում, սոցիալական ցանցերում, ինչպես նաև բանկի տեղեկատվական նյութերում:

Membership Rewards պարգևատրումների ծրագրի պայմանները

1. Ծրագիրը նախատեսում է American Express® Gold Քարտով կատարած բոլոր վճարային գործառնությունների, ինչպես նաև կանխիկի ստացման գործառնությունների դիմաց միավորների կուտակում, որոնք հետագայում փոխարինվում են բանկի կողմից առաջարկվող պարգևատրումներով: Քարտից Քարտ փոխանցումների, կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, բանկին տրամադրված պարբերական վճարման հանձնարարականով կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, ինչպես նաև ՀՀ տարածքում գրանցված էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվող գործարքների և բջջային օպերատորների գրասենյակներում վճարումների դեպքում միավորներ չեն կուտակվում:

2. Կից Քարտերի միջոցով առևտրի և սպասարկման կետերում անկանխիկ վճարումների և կանխիկի ստացման գործառնությունների դիմաց վաստակած միավորներն ավելանում են Քարտատիրոջ՝ հիմնական Քարտի միջոցով վաստակած ընդհանուր միավորներին և ենթակա են տնօրինման հիմնական Քարտի Քարտատիրոջ կողմից:

3. Քարտատիրոջ անդամակցումը ծրագրին կատարվում է 1 (մեկ) տարի ժամկետով, բայց ոչ ավել, քան Քարտի գործողության ժամկետն է:

4. Քարտատերը կարող է իր կուտակած միավորներն օգտագործել՝ զանգահարելով բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն: Միավորները չեն կարող օգտագործվել գումարի կանխիկացման կամ բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների մարման նպատակով:

5. Այն դեպքում, երբ Քարտատերն ունի մեկից ավելի American Express® Gold Քարտեր, նա ցանկացած ժամանակ իրավունք ունի իրականացնել կուտակ-

ված միավորների տեղափոխում իր Քարտերի միջև՝ զանգահարելով բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն կամ լրացնելով համապատասխան դիմում բանկի մասնաճյուղում:

6. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտատիրոջն առաջարկվող ապրանքների և ծառայությունների տեսականու մեջ ներառված ապրանքը և/կամ ծառայությունն առևտրի և սպասարկման կետում սպառվելու կամ այլ հիմքով տվյալ պահին անհասանելի լինելու համար: Նման իրավիճակում Քարտատիրոջն առաջարկվում է ընտրություն կատարել այլ ապրանքների և ծառայությունների տեսականուց:

7. Ծրագրին անդամակցման սակագները սահմանվում են բանկում տվյալ պահին գործող սակագներով:

8. Պայմանների ուժի մեջ մտնելով՝ նախկինում գործող պայմանները չեղյալ են համարվում:

Ապահովագրական ծառայությունների նկարագրությունը և հիմնական պայմանները

American Express® Gold Քարտի ապահովագրական փաթեթը ներառում է ապահովագրության հետևյալ ծառայությունները

Ապահովագրության տեսակ	Առավելագույն սահմանաչափ
Ճանապարհորդության ընթացքում բժշկական ծախսերի ապահովագրություն	50 000 ԱՄՆ դոլար
Թռիչքի չեղարկում, բաց թողում	3 000 ԱՄՆ դոլար
Թռիչքի ուշացում	40 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր ուշացված ժամի դիմաց՝ բացառությամբ առաջին 4 ժամերի, առավելագույնը՝ 12 ժամ
Ուղեբեռի ուշացում	60 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր ուշացված ժամի դիմաց՝ բացառությամբ առաջին 4 ժամերի, առավելագույնը՝ 12 ժամ
Ուղեբեռի կորուստ	1 000 ԱՄՆ դոլար
Փաստաթղթերի փոխարինում	500 ԱՄՆ դոլար
Հարձակում	3 150 ԱՄՆ դոլար 150 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր օրվա համար, առավելագույնը՝ 21 օր
Իրավաբանական ծախսեր	3 000 ԱՄՆ դոլար
Գնումների ապահովագրություն	5 000 ԱՄՆ դոլար տարեկան և 2 500 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր իրի համար
Գնային տատանումներից ապահովագրություն	3 000 ԱՄՆ դոլար տարեկան և 400 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր իրի համար 15 ԱՄՆ դոլարից ավել գնումների դեպքում
Ինտերնետային առաքման երաշխիք	3 000 ԱՄՆ դոլար տարեկան և 1 000 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր իրի համար
Ընդլայնված երաշխիքային ժամկետ	3 000 ԱՄՆ դոլար տարեկան և 500 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր իրի համար
Ապահովագրություն զեղծարարությունից	2 500 ԱՄՆ դոլար

Ապահովագրական ծածկույթի հասանելիություն

American Express® Gold Քարտատերերի ապահովագրական ծառայությունների ծածկույթը գործում է ամբողջ աշխարհում, տրամադրվում է յուրաքանչյուր American Express® Gold Քարտատիրոջը՝ առանց որևէ հավելավճարի կամ միջնորդավճարի: Այն ընդունելի է ճանապարհորդական ապահովագրական ծածկույթի հիման վրա վիզաներ կամ այլ ծառայություններ տրամադրող հաստատությունների կողմից՝ ներառյալ Հայաստանում գործող դեսպանատները և այլ համապատասխան հաստատությունները: Քարտատիրոջը տրամադրվում է Ապահովագրության առկայությունը վկայող հավաստագիր (Certificate of Insurance), որն անհրաժեշտության դեպքում պետք է ներկայացնել նման երաշխիքներ պահանջող համապատասխան հաստատություններ: Ճանապարհորդական ապահովագրության ծառայության բոլոր ծածկույթները տրամադրվում են ինչպես Քարտատիրոջը, այնպես էլ ճանապարհորդության ընթացքում վերջինիս ուղեկցող ընտանիքի անդամներին:

Ճանապարհորդության ընթացքում բժշկական ծախսերի ապահովագրություն

Ապահովագրական ծառայությունից օգտվելու անհրաժեշտությունը կարող է առաջանալ այն դեպքում, երբ ճանապարհորդության ընթացքում Քարտատերը ստանում է մարմնական վնասվածք կամ ձեռք է բերում հիվանդություն, որի արդյունքում կրում է բժշկական ծախսեր, հոսպիտալացվում է, ինչպես նաև շտապ տեղափոխման կամ հայրենադարձության կարիք ունի: Նշված բոլոր իրավիճակներում Քարտատերն ապահովագրված է, և այս ծառայություններն անհրաժեշտության դեպքում կտրամադրվեն նրան անվճար: Բացի այդ, ճանապարհորդության ընթացքում ցանկացած ժամանակ Քարտատերը կարող է օգտվել ապահովագրական ընկերության շուրջօրյա աջակցման ծառայությունից, որի շնորհիվ միշտ կարելի է ստանալ բժշկական և իրավաբանական խորհրդատվություն, ինչպես նաև մասնագետների տվյալների վերաբերյալ տեղեկություններ:

Ճանապարհորդական անհարմարավետություններ

Ապահովագրական ծառայությունից օգտվելու անհրաժեշտությունը կարող է առաջանալ այն դեպքում, երբ ճանապարհորդելիս Քարտատերն առնչվում է այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են՝ ուղեբեռի կորուստ, ուշացում կամ վնասում, թռիչքի հետաձգում կամ բաց թողնում, փաստաթղթերի կորուստ: Նման դեպքերում ապահովագրությունը տեղի է ունենում ֆինանսական փոխհատուցման տեսքով: Անհրաժեշտ պայման է հանդիսանում ապահովագրական միջադեպի հիմնավորումը, որի համար հարկավոր է պահանջել հաստատող փաստաթղթեր և անդորրագրեր, որոնք անհրաժեշտ կլինի ուղարկել ապահովագրական ընկերությանը՝ փոխհատուցումը ստանալու նպատակով:

Գնումների ապահովագրություն

Ապահովագրական ծառայությունից օգտվելու անհրաժեշտությունը կարող է առաջանալ այն դեպքում, երբ American Express® Gold Քարտով գնված ապրանքը վնասվում կամ գողացվում է գնման օրվանից սկսած 120 օրերի ընթացքում: Ապահովագրված գնումը ենթակա է վերանորոգման կամ փոխարինման, ինչպես նաև փոխհատուցման՝ ապահովագրական ընկերության կողմից և վերջինիս որոշմամբ: Այս ապահովագրատեսակը գործում է ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում գնված ապրանքների համար:
American Express® Gold Քարտով կատարված գնումները պաշտպանված են նաև գնային տատանումներից, եթե գնված ապրանքի գինը 30 օրերի ընթացքում փոփոխվել է:
Օնլայն կատարված գնումները պաշտպանված են առաքման ընթացքում կորստից և վնասվելուց:
Եթե American Express® Gold Քարտով կատարված գնումը ունի երաշխիքային ժամկետ, ապա այն կկրկնապատկվի առավելագույնը 36 ամիս ժամկետով:

Ապահովագրություն զեղծարարությունից

American Express® Gold Քարտն առաջինն է Հայաստանում, որը տրամադրում է ապահովագրություն զեղծարարությունից: Բանկում գործող անվտանգության համակարգերից բացի, American Express® Gold Քարտը պարունակում է ապահովագրություն, որը ներառում է նաև օնլայն զեղծարարությունների և քարտային հաշվի անօրինական օգտագործման դեմ պաշտպանություն: Սա նշանակում է, որ Ձեր քարտային հաշիվը մշտապես գտնվում է վերահսկողության տակ: Բացի այդ, շնորհիվ անվճար SMS հաղորդագրությունների ծառայության, ցանկացած գործարքից հետո Ձեր բջջային հեռախոսահամարին ուղարկվում է հաղորդագրություն գործարքի վերաբերյալ: Այդուհանդերձ, որևէ կասկածելի գործարք նկատելու կամ հաղորդագրություն ստանալու դեպքում անհրաժեշտ է անմիջապես (առավելագույնը 72 ժամվա ընթացքում) զանգահարել բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն և հայտնել այդ մասին: Ապօրինի գործարք բացահայտելու դեպքում Ձեր ֆինանսական միջոցները կվերականգնվեն:

Ի՞նչ անել ապահովագրական միջադեպի ի հայտ գալու դեպքում

Ապահովագրական ծածկույթով American Express® Gold Քարտատերերին տրամադրվող բոլոր ապահովագրական ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է զանգահարել բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն և հայտնել միջադեպի մասին: Կարճ ժամանակում Ձեզ կօգնեն կապ հաստատել միջազգային «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության ռուսալեզու շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոնի հետ, որտեղից Դուք կստանաք Ձեզ անհրաժեշտ ապահովագրական ծառայությունը՝ փոխհատուցման, շտապ օգնության կամ տեղեկատվության տրամադրման տեսքով: Ճանապարհորդության ընթացքում ուղեբեռի կորստի կամ ուշացման, թռիչքի ուշացման կամ բաց թողնման, ինչպես նաև ապահովագրված գնումների գողության կամ վնասման դեպքերում անհրաժեշտ է տրամադրել միջադեպը հաստատող փաստաթղթեր, որոնք կարող են լինել անդորրագրեր, ոստիկանության կողմից տրամադրված հավաստագրեր, օդանավակայաններում տրամադրվող փաստաթղթեր, տոմսեր և այլն:

Ապահովագրությունից օգտվելու համար խորհուրդ է տրվում միշտ պահպանել վերոնշյալ փաստաթղթերը կամ պահանջել դրանք համապատասխան ընկերություններից, որպեսզի որևէ խնդիր չառաջանա ապահովագրական փոխհատուցում ստանալու ժամանակ:
Ապահովագրական ծառայությունների տրամադրման մանրամասն պայմաններին, կիրառվող սահմանափակումներին և բացառություններին կարող եք ծանոթանալ **www.americanexpress.am** կայքում հրապարակվող «Ակբա բանկ»-ի American Express® Gold Քարտատերերին տրամադրվող ապահովագրական ծառայությունների ընդհանուր պայմաններ» փաստաթղթից:

«Օժանդակություն ճանապարհին» ծառայության պայմանները

1. «Օժանդակություն ճանապարհին» ծառայությունը նախատեսում է Քարտատիրոջ պատվերով խափանված մարդատար ավտոմեքենայի (քաշը չպետք է գերազանցի 3 տոննան) տարհանման ծառայության մատուցում ՀՀ տարածքում:

2. Ծառայությունը Քարտատիրոջը հասանելի է շուրջօրյա և իրականացվում է բացառապես վերջինիս կողմից բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն զանգահարելու միջոցով կատարված պատվերի հիման վրա:

3. Ծառայությունը Քարտատիրոջը մատուցվում է անվճար, տարվա ընթացքում առավելագույնը 2 (երկու) անգամ: Տարվա հաշվարկը կատարվում է Քարտը ձեռք բերելու օրվանից 1 (մեկ) օրացուցային տարի հիմքով և շարունակվում նույն սկզբունքով: Տարեկան 2 (երկու) անգամ ծառայության մատուցումը ներառում է ինչպես հիմնական, այնպես էլ կից Քարտատերերի համար մատուցված ծառայությունների հանրագումարը:

4. Ծառայությունից անվճար օգտվելու համար սահմանված պատվերների քանակը գերազանցելու կամ նշված պայմաններին չբավարարելու դեպքում Քարտատերն իրավունք ունի օգտվել Ծառայությունից՝ Ծառայությունը մատուցած ընկերությանը Ծառայության արժեքն իր կողմից վճարելու և դրա մասին պատվերի իրականացման պահին իր ցանկությունը բանկին նախապես հայտնելու պայմանով:

5. Ծառայության արժեքը Քարտատիրոջ կողմից վճարելու պայմանով ծառայությունից օգտվելու սակագները սահմանվում են բանկի կողմից և հրապարակվում **www.americanexpress.am** կայքում:

Priority Pass համակարգի քարտերի տրամադրման պայմանները

American Express® Gold հիմնական Քարտ ունեցող հաճախորդներին Priority Pass քարտի տրամադրում	անվճար
Priority Pass քարտի ժամկետի ավարտից հետո քարտի վերաթողարկում	անվճար
Յուրաքանչյուր այցելություն	24 բրիտանական ֆունտ ստերլինգ
Լրացուցիչ հյուրի այցելություն	24 բրիտանական ֆունտ ստերլինգ
American Express® Gold Կից Քարտի Քարտատերերին Priority Pass քարտի տրամադրում	5 000 ՀՀ դրամ
American Express® Gold Կից Քարտի Քարտատերերին Priority Pass քարտի վերաթողարկում	5 000 ՀՀ դրամ

Հետևե՛ք մեր առաջարկներին առցանց հարթակնե-
րում, սոցիալական ցանցերում, ինչպես նաև
www.acba.am և **www.americanexpress.am** կայքե-
րում:

ՆՇՈՒՄՆԵՐ

ՆՇՈՒՄՆԵՐ

ՄԻ վայելիր կյանքի ԱՌԱՆՑ ՆՐԱ™

acba

+ 374 10 31 99 99

www.americanexpress.am

Մեզ կարող եք գտնել
նաև facebook-ում

eFO 72-16-33/8#6

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: